

ԳԱՆՏԱՐԱՅՈՑ ԹՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

# ԿԱՆՏԵԴ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԻՍԱՌՈՒԷՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՑ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



**GANTEGH** BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE  
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MONTREAL ՄԱՅՐ ՏԱՆԱՐ

ԿԻՐԱԿԻ 3 Մայիս 2020

161

DIMANCHE, 3 Mai 2020

## ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2  
stgregorychurch@gmail.com | www.saintgregory.ca

**ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ**  
**DIMANCHE ROUGE**

**Աստուածաշունչի Ընթերցումներ**  
**ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ**

13. 16- 43

**ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ**

5. 1- 14

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ**

**ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ**

5. 19- 30

**Les lectures de la Bible d'aujourd'hui :**

1 PIERRE 5. 1- 14

JEAN 5. 19- 30

**Պատարագիչ՝ Հոգեւոր Հովիւ**

**ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔԶՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ**

**Célébrant: Prêtre Paroissial**

**RÉV. PÈRE DAVID MARGARYAN**

**Առաւօտեան Ժամերգութիւն Ժամը-**

**Office Matines à**

**9:30-ին**

**9h30**

**Ս. Պատարագ- ուղիղ սփռում Ժամը-**

**La Sainte Messe – En direct à**

**10:30-ին**

**10h30**

**Հոգեհանգիստ - ուղիղ սփռում Ժամը-**

**Office de Requieme – En direct à**

**12:30-ին**

**12h30**

**Organist: Vahram Sargsyan**

**Cœur: Emma et Zara Sargsyan**

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ 1-ԻՆ ՆԱՄԱԿԷՆ 5. 1- 14

Ձեր մէջ եղող երեցներուն կ'աղաչեմ, ես ալ նոյնպէս երեց ըլլալովս, Քրիստոսին չարչարանքներուն վկայ եւ մասնակից հանդերձեալ փառքին որ պիտի յայտնուի, Աստուծոյ հօտը որ ձեր մէջ է՝ արածեցէք, վերակացու ըլլալով ո՛չ թէ ակամայ՝ հապա կամաւ, ո՛չ թէ անարգ շահախնդրութեամբ՝ հապա յօժարութեամբ, Ո՛չ թէ վիճակներուն վրայ տիրելով՝ հապա հօտին օրինակ ըլլալով. Եւ Հովուապետին երեւցած ատենը փառքի անթառամ պսակը պիտի ընդունիք:

Նմանապէս դո՛ւք, երիտասարդներ, հնազա՛նդ եղէք ծերերուն: Ամենքդ իրարու հնազանդ ըլլալով՝ խոնարհութիւն հագէք. վասն զի Աստուած ամբարտաւաններուն հակառակ կը կենայ, բայց խոնարհներուն շնորհք կու տայ: Ուրեմն Աստուծոյ հօր ձեռքին տակ խոնարհեցէ՛ք, որպէս զի ձեզ ժամանակին բարձրացնէ: Ձեր ամէն հոգը անոր վրայ ձգեցէ՛ք, վասն զի անիկա ձեզի համար կը հոգայ:

Արթո՛ւն կեցէք, հսկեցէ՛ք, վասն զի ձեր հակառակորդը, Սատանան՝ մոնչող առիծի պէս կը պտըտի ու կը փնտոէ թէ ո՛վ կլլէ: Անոր դէմ կեցէ՛ք հաւատքով հաստատուած, գիտնալով որ ձեր եղբայրներն ալ աշխարհի մէջ նոյն չարչարանքները կը կրեն:

Եւ բոլոր շնորհներու Աստուածը, որ մեզ իր յաւիտենական փառքին կանչեց Քրիստոս Յիսուսին միջոցով, քիչ մը ատեն նեղութիւն կրելէ ետքը, ինք ձեզ թող կատարեալ ընէ՛, հաստատէ՛, զօրացնէ՛ ու հիմնէ՛: Իրեն փառք եւ զօրութիւն յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Սիդուանոս հաւատարիմ եղբոր ձեռքով, ինչպէս ես կը կարծեմ, համառօտ մը ձեզի գրեցի, յորդորելով ու վկայելով թէ այս է Աստուծոյ ճշմարիտ շնորհքը, որուն մէջ հաստատ կեցեր էք: Բարեւ կ'ընէ՛ ձեզի Բարբելոնի մէջ եղած եկեղեցին, որ ձեզի հետ ընտրուած է ու իմ որդիս Մարկոսն ալ: Բարեւ տուէք իրարու սիրոյ համբոյրով. խաղաղութիւն ձեր ամենուն հետ, որ Քրիստոս Յիսուսին մէջ էք: Ամէն:

## ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

### 5. 19- 30

Իսկ Յիսուս ըսաւ անոնց. «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, 'Որդին ինքնիրմէ բան մըն ալ չի կրնար ընել, միայն այն՝ ինչ որ Հայրը կ'ընէ. վասն զի ինչ որ անիկա կ'ընէ, նմանապէս Որդին ալ նոյնը կ'ընէ': Քանզի Հայրը կը սիրէ Որդին եւ ամէն բան կը ցուցնէ անոր՝ ինչ որ ինք կ'ընէ եւ ասոնցմէ ա՛լ աւելի մեծ գործեր պիտի ցուցնէ անոր, որպէս զի դուք զարմանաք: Վասն զի ինչպէս Հայրը մեռելները կը յարուցանէ ու կը կենդանացնէ, այնպէս ալ Որդին որոնք կ'ուզէ կը կենդանացնէ: Քանզի Հայրը մէկը չի դատեր, հապա ամէն դատաստան Որդիին տուաւ. Որպէս զի ամէնքը պատուեն Որդին, ինչպէս Հայրը կը պատուեն: Ան որ Որդին չի պատուեր, զանիկա դրկող Հայրը չի պատուեր: Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ 'Ան որ իմ խօսքս մտիկ կ'ընէ եւ կը հաւատայ անոր որ զիս դրկեց, յաւիտենական կեանք ունի ու դատապարտութեան տակ չիյնար, հապա մահուանէ դէպի կեանք անցած է': Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ Ժամանակ պիտի գայ եւ հիմա ալ է, երբ մեռելները պիտի լսեն Աստուծոյ Որդիին ձայնը եւ անոնք որ կը լսեն, պիտի ապրին: Վասն զի ինչպէս Հայրը իր անձին մէջ կեանք ունի, այնպէս ալ Որդիին տուաւ, որ իր անձին մէջ կեանք ունենայ, Եւ դատաստան ընելու իշխանութիւն ալ տուաւ անոր, քանզի անիկա Որդի մարդոյ է: Ասոր վրայ մի՛ զարմանաք. վասն զի Ժամանակ պիտի գայ՝ երբ բոլոր գերեզմաններուն մէջ եղողները անոր ձայնը պիտի լսեն, Ու դուրս պիտի գան: Անոնք որ բարի գործեր են՝ կեանքի յարութեան համար եւ անոնք որ չար գործեր են՝ դատապարտութեան յարութեան համար»:

«Ես ինքնիրմէս բան մը չեմ կրնար ընել. ինչպէս կը լսեմ, այնպէս կը դատեմ եւ իմ դատաստանս արդար է, վասն զի ես իմ կամքս չեմ փնտռեր, հապա անոր կամքը որ զիս դրկեց»:

### 1 PIERRE 5. 1- 14

Je prie les Anciens qui sont parmi vous, moi qui suis Ancien avec eux, et témoin des souffrances de Christ, et participant de la gloire qui doit être révélée, [et je leur dis] : Paissez le Troupeau de Christ qui vous est commis, en prenant garde sur lui, non point par contrainte, mais volontairement; non point pour un gain déshonnête, mais par un principe d'affection. Et non point comme ayant domination sur les héritages [du Seigneur], mais en telle manière que vous soyez pour

modèle au Troupeau. Et quand le souverain Pasteur apparaîtra, vous recevrez la couronne incorruptible de gloire.

De même, vous jeunes gens, soyez soumis aux Anciens, et ayant tous de la soumission l'un pour l'autre, soyez parés par-dedans d'humilité, parce que Dieu résiste aux orgueilleux, mais il fait grâce aux humbles.

Humiliez-vous donc sous la puissante main de Dieu, afin qu'il vous élève quand il en sera temps; Lui remettant tout ce qui peut vous inquiéter : car il a soin de vous. Soyez sobres, [et] veillez : car le diable, votre adversaire, tourne autour de vous comme un lion rugissant, cherchant qui il pourra dévorer. Résistez-lui [donc] en [demeurant] fermes dans la foi, sachant que les mêmes souffrances s'accomplissent en la compagnie de vos frères, qui sont dans le monde.

Or le Dieu de toute grâce, qui nous a appelés à sa gloire éternelle en Jésus-Christ, après que vous aurez souffert un peu de temps, vous rende accomplis, vous affermis, vous fortifie, [et] vous établisse. A lui soit la gloire et la force, aux siècles des siècles, Amen!

Je vous ai écrit brièvement par Silvain notre frère, que je crois vous être fidèle, vous déclarant et vous protestant que la grâce de Dieu dans laquelle vous êtes est la véritable. [L'Eglise] qui est à Babylone, élue avec vous, et Marc mon fils, vous saluent. 14Saluez-vous l'un l'autre par un baiser de charité. Que la paix soit à vous tous, qui êtes en Jésus-Christ, Amen!

### **JEAN 5. 19- 30**

Mais Jésus répondit, et leur dit : en vérité, en vérité je vous dis, que le Fils ne peut rien faire de soi-même, sinon qu'il le voie faire au Père : car quelque chose que le Père fasse, le Fils aussi le fait de même. Car le Père aime le Fils, et lui montre toutes les choses qu'il fait; et il lui montrera de plus grandes œuvres que celle-ci, afin que vous en soyez dans l'admiration. Car comme le Père ressuscite les morts et les vivifie, de même aussi le Fils vivifie ceux qu'il veut. Car le Père ne juge personne; mais il a donné tout jugement au Fils; Afin que tous honorent le Fils, comme ils honorent le Père; celui qui n'honore point le Fils, n'honore point le Père qui l'a envoyé.

En vérité, en vérité je vous dis : que celui qui entend ma parole, et croit à celui qui m'a envoyé, a la vie éternelle, et il ne sera point exposé à la condamnation, mais il est passé de la mort à la vie.

En vérité, en vérité je vous dis : que l'heure vient, et elle est même déjà [venue], que les morts entendront la voix du Fils de Dieu, et ceux qui l'auront entendue, vivront. Car comme le Père a la vie en soi même, ainsi il a donné au Fils d'avoir la vie en soi-même. Et il lui a donné le pouvoir de juger parce qu'il est le Fils de l'homme. Ne soyez point étonnés de cela : car l'heure viendra, en laquelle tous ceux qui sont dans les sépulcres entendront sa voix. Et ils sortiront, savoir ceux qui auront bien fait, en résurrection de vie; et ceux qui auront mal fait, en résurrection de condamnation.

Je ne puis rien faire de moi-même : je juge conformément à ce que j'entends, et mon jugement est juste; car je ne cherche point ma volonté, mais la volonté du Père qui m'a envoyé.



## Հոգեւոր Հովիւի Պատգամը

### «Արիւն մարտիրոսաց, հիմ եկեղեցոյ»

Յարգելի քրիստոսասէր քոյրեր եւ եղբայրներ,

Յինանց շրջանի գունագեղ Կիրակիներէն Ս. Զատիկին յաջորդող երրորդ Կիրակին Կարմիր կը կոչուի «զի Տէրն երեւի որպէս ի Զատիկի օրն Կիրակի»: Այս անուանումն է, որ ունի ժողովրդական ծագում: Կարմիր





Կիրակին Նահատակաց կամ Սրբոց Կիրակի ալ կը կոչուի:

Եկեղեցոյ մէջ այս գունագեղ անուան հետ կապուած որեւէ արարողութիւն չի կատարուիր, որեւէ շարական չկայ: Թերեւս ըստ սովորութեան որոշ եկեղեցիներու մէջ Կանաչ եւ Կարմիր Կիրակիներուն արտաքին փոփոխութիւն կը նկատուի. եկեղեցիին վարագոյրը, պատարագիչին զգեստը, դպիրներուն շապիկը կանաչ եւ կարմիր կ'ըլլան օրուան համապատասխան: Իսկ որոշ գաւառներու եւ գիւղերու մէջ, ըստ գունագեղ Կիրակիներուն, կանաչ կամ կարմիր կը հագուին:

Կարմիր Կիրակին իր այլաբանական բացատրութեամբ կը խորհրդանշէ Քրիստոսի արեամբ ծաղկած Կիրակի եւ Անոր արեամբ հաստատուած եկեղեցի:

Կարմիր Կիրակին, ըստ ոմանց, նուիրուած է աւետարանական այն պատմութեան, թէ ինչպէս Յիսուս հերթական անգամ երեւցաւ աշակերտներուն Տիբերիայի լիճի ափին: Պետրոսը վերստին կոչուեցաւ իր պաշտօնին. Քրիստոս անոր երէք անգամ հարցուց. «Սիմոն, Յովնանի՛ որդի, կը սիրե՞ս զիս»: Պետրոսը երէք անգամ պատասխանեց Յիսուսին՝ վստահեցնելով. «Այո՛, Տէ՛ր, Դուն՛ գիտես, որ կը սիրեմ Քեզ»: Ի պատասխան այդ վստահեցման՝ Տէրը երէք անգամ ալ Պետրոսին յանձնարարեց. «Արածե՛ Իմ ոչխարներս» (Յովհաննէս 21:1-19):

Կարմիր գոյնի խորհրդանիշներուն անդրադառնալով՝ կը տեղեկանանք, որ Եսայի մարգարէն համարած է զայն որպէս ՅԱՂ-ԹԱԿԱՆ գոյն. «Ո՞վ է աս, որ սուրալով կու գայ Եդովմէն, որուն զգեստները Բոսորի կարմրութիւնն ունին, գեղեցիկ պատմուճանով եւ հուժկու զօրութեամբ...ինչո՞ւ կարմիր են զգեստներդ հնձուորի հանդերձներու նման» (Եսայի 63:1-2):

Կարմիրը ոչ միայն յաղթանակի, այլ նաեւ պայքարի խորհրդանիշ է: Մարտական դրօշները, պայքարներն ու հերոսները բնորոշուած են կարմիր մակդիրով: Քրիստոնեայի համար սովորական դարձած է այն ասացումաձքը, որ կ'ըսէ. «Կեանքը պայքար է»: Ան ամէն օր, պայքարելով մեղքին եւ չարին դէմ, կընթանայ պայքարի ուղիով: Այդ ուղին նեղ է եւ անձուկ, բայց կ'առաջնորդէ դէպի Կեանք եւ Յաղթանակ: Ան մկրտութեան եւ դրոշմի խորհուրդներովը կ'օժտէ հոգեւոր կենսական նոր սկզբունքով, կը ստանայ անհրաժեշտ զօրութիւնն ու կարողութիւնը պայքարելու ապականիչ այն չար ուժերուն դէմ, որոնք կը սպառնան խաթարել, տկա-

րացնել կամ սպանել անոր հոգևոր կեանքը: Քրիստոնեան ուժեղ մարտիկի կերպար է, անոր համար օտար են վախը, թուլութիւնը, յուսահատութիւնը:

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ Մայիս 9-ին նշուող տօները մէկ օրուայ մէջ նշուելու չեն: Կը կարծեմ՝ վաղուց արդէն շատերուս մօտ է, որ ամբողջ Մայիս ամիսը կընկալուի յաղթական: Ոչ միայն Պեռլինի գրաւման ու Մեծ յաղթանակին, ոչ միայն Շուշիի ազատագրումին եւ աւելի Մեծ Յաղթանակի ամիս է Մայիսը, այլեւ Աւարայրն ալ Մայիս ամսուն է, Սարդարապատ-Քաջ Ապարան-Ղարաքիլիսա եռաճակատ յաղթանակն ալ Մայիսին է: Մահուան դէմ ամենամեծ Յաղթանակի՝ Քրիստոսի Յարութեան 50-օրեայ տօնական շրջանն ալ գրեթէ միշտ այս ամսուն է:

Այնպէս որ, ամբողջ ամիսը նշուող **ՅԱՂԹԱՏՕՆ** է :

### **ՇՆՈՐՀԱԻՈՐ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԱԻԱՆԴՈՅԹԸ ՊԱՇԵՂՈՒ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՏՕՆԸ:**

Թող մեր Ոգին առաւել զօրաւոր ըլլայ յաղթած հերոսներով եւ իրենց յաղթանակ շնորհած Տիրոջմով:

Ս. Յարութիւնը մահուան դէմ յաղթանակ է, Մայիսեան յաղթանակներն ալ՝ Յարութեան հաւատացողներուն յաղթանակն է մահ սփռողներուն դէմ, ըլլան անոնք՝ հայրենիքին հարեւան, թէ հեռաբնակ ազգերէն:

Թող Տիրոջ հրեշտակներուն բանակը առաջնորդ ու պահապան ըլլայ յանուն հայրենիքի, հաւատքի, սիրոյ եւ արդարութեան համար ֆիզիքապէս ու բարոյապէս կոռուղ իւրաքանչիւր անհատի:

Ինչպէս գիտէք, քանի մը օրէն ետք, մեր սիրելի մայրերուն տօնն է: Մեզի համար հրաշալի օր մըն է, գեղեցիկ առիթ մը, երբ մենք կրնանք մեր ջերմ եւ ուրախ ծայիտով շնորհաւորել մեր անուշիկ մայրերուն սքանչելի տօնը:

Ընտանիքը աշխարհին սիրտն է: Իսկ այս սիրտին մէջ գլխաւոր երակը մայրն է, որուն ընդմէջէն արեան փոխարէն սէր կը հոսի: Անյատակ ծով մը եւ անհուն տիեզերք մըն է մօր սիրտը: Մայրական սէրը կը նմանի մաքուր ու անարատ կաթի:

Քանի որ Աստուած ֆիզիքապէս միայնգամայն ամէն տեղ չէր կրնար ըլլալ, այդ պատճառով ստեղծած է մայրը: Ծաղկաստան է մօր սիրտը: Իր զաւակը կուրծքին սեղմելով կողողէ անոր իր սիրտին երփներանգ ծաղիկներուն բոյրովը: Մանուկը կը շնչէ այդ



դրախտային մթնոլորտէն եւ կը խմէ աստուածային սիրոյ նեկտարէն:

Մայրը մեր սերն է, ուրախութիւնն ու քաղցրութիւնը:

Ինչքան գեղեցիկ խօսքեր ու արտայայտութիւններ պէտք են, նկարագրելու համար, թէ «Ո՞վ է մայրը» եւ կամ «Ի՞նչպիսին է մայրը»: Մայրը նոր մարդու կեանք տուողն է, ստեղծիչը նոր էակի, որուն համար շատ անգամներ եթէ պէտք եղած է, գիտակցօրէն գոհած է իր երիտասարդ կեանքը:

Մօր նկարագիրը քաղցր է ու սուրբ: Ան իր կամքովը՝ տունին սինն է, հաւատքով՝ հիմը, իսկ իր սիրով՝ սիրտն ու հոգին: Մայրը իր գաւկին առաջին ու լաւագոյն դաստիարակն է, որ անոր կը սորվեցնէ բարին, գեղեցիկն ու ճշմարիտը: Ան ճարտարապետ մըն է, որ ոչ միայն իր գաւկին նկարագրին յատկագիծը կը գծէ, այլ նաեւ կը կերտէ անոր ուղիղ, ապահով ու յաջող ճանապարհը: Կեանքին մէջ իւրաքանչիւրիս համար ամենաքաղցր խօսքերն են երկինք, տուն, սեր եւ մայր:

Թող իւրաքանչիւր զաւակ իր մօրը սիրէ առանձնայատուկ երկիւղածութեամբ ու իր սերը գործի վերածէ, որպէսզի ան մայրամուտին ստանայ մօր բացառիկ օրհնութիւնը: Իմ կարծիքովս աւելի մեծ երջանկութիւն չկայ, քան մօր օրհնութեամբ ապրիլը:

Պօղոս առաքեալը կը յորդորէ բոլոր զաւակներուն, անոնց ուշադրութեան յանձնելով այս խօսքերը. «Որդիներ՝, հնազանդ եղէք ձեր ծնողներուն ի Տէր, որովհետեւ այդ է ճիշտը» (Եփեա. 6:1) Հնազանդիլ կը նշանակէ՝ յարգել ու սիրել ՚:

Շնորհաւոր Ձեր բոլորին տօնը, սիրելի եւ առիւծածին Մայրեր:

Մեր աղօթքն է, որ Դուք միշտ երջանիկ, ուրախ եւ հպարտ ըլլաք, որ բարի եւ արդար գործ կատարած էք առիւծ զաւակներ ծնանելով ու ազգը հարստացնելով: Օրհնեա՛լ ըլլաք: Աստուած Ձեզ ընտրած է ու վստահ եղէք, որ Ձերն է Աստուծոյ Տան մէջ վայելելու սերը եւ ուրախութիւնը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Օրհնութեամբ՝

Տ. Դաւիթ քահանայ Մարգարեան

Հոգեւոր հովիւ

## "Le sang des martyrs, est la base de l'église"



Chers sœurs et frères  
épris de chrétiens,  
Des dimanches  
colorés de la région  
des Yinants, Pâques  
est appelée rouge le

troisième dimanche, "parce que le Seigneur est probablement le dimanche de Pâques". C'est ce nom qui a une origine populaire. Le dimanche rouge est également appelé le jour des martyrs ou dimanche saint. Il n'y a pas de rituel dans l'église associé à ce nom coloré, il n'y a pas d'hymne.

Peut-être que dans certaines églises, il y a un changement dans l'apparence des femmes. Le voile de l'église, la robe du prêtre et les manteaux des scribes sont verts et rouges selon le jour. Et dans certaines provinces et villages, selon les dimanches colorés, ils sont vêtus de vert ou de rouge.

Avec son explication allégorique, le dimanche rouge symbolise l'Église qui a prospéré dans le sang du Christ et a été établie par son sang. Le dimanche rouge, selon certains, est consacré à l'histoire évangélique de la façon dont Jésus est apparu à nouveau aux disciples sur les rives du lac de Tibériade. Peter a été rappelé à son bureau. Le Christ lui a demandé trois fois: "Si-mo, fils de John, m'aimes-tu?" Pierre a répondu à Jésus trois fois, les assurant: "Oui, Seigneur, tu sais que je t'aime." En réponse à cette assurance, le Seigneur a instruit Pierre trois fois: « Pais mes brebis» (Jean 21: 1-19).

En se référant aux symboles de la couleur rouge, nous constatons que le prophète Isaïe la considérait comme la couleur YAR-TAKAN. "Qui est celui qui vient d'Édom, dont les vêtements ont la rougeur du sein, avec une belle robe et avec une force puissante? Pourquoi tes vêtements sont-ils aussi rouges que les vêtements d'un faucheur?" (Isaïe 63: 1-2).

Le rouge n'est pas seulement un symbole de victoire, mais aussi un symbole de lutte. Drapeaux, Les luttes et les héros sont déterminés par le tapis rouge. Il est de coutume pour un chrétien de dire: "La vie est une lutte." Chaque jour, il lutte contre le péché et le mal et marche sur le chemin de la pierre. Ce chemin est étroit et personnel, mais il mène à la vie et à la victoire. À travers les sacrements du baptême et du scellement, il a doté d'un nouveau principe spirituel vital, gagnant la force et la capacité nécessaires pour lutter contre les forces du mal qui menacent de perturber, détruire ou tuer sa vie spirituelle. Le christianisme est l'image d'un combattant fort, pour lequel la peur, la faiblesse et le désespoir sont étrangers.

Chers sœurs et frères, Les fêtes célébrées le 9 mai ne seront pas célébrées en une seule journée. Je pense que cela fait longtemps que beaucoup d'entre nous n'ont pas été victorieux tout le mois. Non seulement la capture de Berlin et la Grande Victoire, La victoire triomphale Sardarapat-Bash Aparan-Gharakilisa est également en mai. La période de 50 jours de la plus grande victoire contre la mort, la résurrection du Christ, est presque toujours ce mois-ci.

Que notre Esprit soit plus fort que les héros victorieux et le Seigneur qui leur a donné la victoire. S. La résurrection est une victoire sur la mort, et la victoire de mai est une victoire pour ceux qui croient en la résurrection contre ceux qui propagent la mort, qu'ils soient de la patrie ou des nations voisines.

Que l'armée des anges du Seigneur soit le chef et le gardien de chaque individu qui combat physiquement, moralement et moralement pour la patrie, la foi, l'amour et la justice. Comme vous le savez, aujourd'hui est aussi la fête de nos mères bien-aimées.

C'est une merveilleuse journée pour nous, une belle occasion quand nous pouvons féliciter notre doux 1er mai avec notre sourire chaleureux et joyeux. La famille est le cœur du monde. Et la veine principale de ce cœur est la mère, entre qui l'amour coule au lieu du sang. Le cœur de la mère est une mer sans fond et un univers sans fin. L'amour d'une mère est comme du lait pur et pur.

Parce que Dieu ne pouvait pas être physiquement seul partout, c'est pourquoi Il a créé la mère. Le cœur de ma mère coule. Son fils serra ses seins et renifla son cœur avec l'odeur des fleurs colorées. L'enfant respire cette atmosphère céleste et boit de l'amour de l'amour divin. Mère est notre amour, notre joie et notre douceur.

Combien de beaux mots et expressions sont nécessaires pour décrire "Qui est la mère?" Ou "A quoi ressemble la mère?" La mère est la donneuse d'une nouvelle vie, la créatrice d'un nouvel être, pour qui plusieurs fois si nécessaire, Il a consciemment sacrifié sa jeune vie. La description de la mère est douce et sacrée. Par sa propre volonté, il est le pilier de la maison, par la foi le fondement, et par son amour le cœur et l'âme.

La mère est la première et la meilleure éducatrice de son enfant, qui lui enseigne le bien, le beau et le vrai. Il est un architecte qui non seulement trace la ligne de la description de son fils, mais construit également son chemin simple, sûr et réussi. Les mots les plus doux pour chacun de nous dans la vie sont paradis, maison, amour et mère. Laissez chaque enfant aimer sa mère avec une peur particulière et transformez son amour en action afin qu'il puisse recevoir la bénédiction exclusive de la mère au coucher du soleil.

À mon avis, il n'y a pas de plus grand bonheur que de vivre avec la bénédiction d'une mère, qui lui apprend le bien, le beau et le vrai. Il est un architecte qui non seulement trace la ligne de la description de son fils, mais construit également son chemin simple, sûr et réussi. Les mots les plus doux pour chacun de nous dans la vie sont paradis, maison, amour et mère.

L'apôtre Paul exhorte tous les enfants à prêter attention à ces paroles. "O enfants, obéissez à vos parents dans le Seigneur, car c'est la bonne chose à faire" (Éphésiens 6: 1). Obéir signifie respecter et aimer. Joyeuses Fêtes à vous toutes, chères mères au cœur de lion. Notre prière est que vous serez toujours heureux, joyeux et fiers d'avoir fait un bon et juste travail en donnant naissance à des lionceaux et en enrichissant la nation. Vous bénissiez! Dieu vous a choisi et soyez sûr qu'il vous appartient de jouir

de l'amour et de la joie dans la Maison de Dieu, maintenant  
et pour toujours, et pour toujours et à jamais.

Avec la bénédiction,  
Rév. Père David Margaryan  
Prêtre Paroissial



### ԿԱՐԵԻՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Արդեօք Գիտեի՞ք թե,-

- **Ե՞րբ մարդ կեանքին մեջ առաջին անգամ Ս.  
Հաղորդութիւն կը ստանայ:**

Ս. Մկրտութեան ժամանակ, երբ չմկրտուած անձը կը մաքրուի  
աղամական կամ սկզբնական մեղքերէն՝ դառնալով եկեղեցւոյ  
անդամ, քրիստոնէայ եւ Ս. Հոգիի տաճար: Ս. Մկրտութեան  
անմիջապէս յաջորդող Ս. Դրոշմի խորհուրդի ընթացքին՝  
երկրպագութենէն յետոյ, առաջին անգամ նոր մկրտուածը Ս.  
Հաղորդութիւն կը ստանայ: Այդ կը խորհրդանշէ քրիստոնէայի  
ամբողջական անդամակցութիւնը Եկեղեցւոյ: Եթէ մկտուողը  
չափահաս է, ապա եկեղեցականը Ս. Հաղորդութիւնը կը դնէ  
անոր բերանին մէջ, իսկ եթէ նորածին է, ապա շրթնահաղորդ  
կ'ընէ:



## ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

### ԱՂՕԹՔ ԲՈԼՈՐԻՆ ՀԱՄԱՐ

Յիշէ՛, Տէր, քեզի ծառայողները.

- Մեր ծնողները, ուսուցիչները, եղբայրներն ու քոյրերը, ընկերները, մեզ կերակրողները, ուխտաւորները, ճամբորդները, մեզ հանգստացնողները, վաստակաւորները, խոստովանողները, ապաշխարողները, գերիները, հիւանդները, նեղեալները, իշխանութեան գլուխ գտնուողները, մեզի չարիք ընողները, բարերարները, թշնամիները, մեզ ատողները. Եւ անոնք՝ որոնք հաւատքով դաստիարակեցին մեզ: Բարերար եւ բազումողորմ Աստուած, քու անմոռաց գիտութեամբդ եւ անբաւ մարդասիրութեամբդ յիշէ՛ բոլոր, քեզի հաւատացողները, եւ ողորմէ՛ բոլորին: Օգնէ՛ եւ փրկէ՛ ամէն տեսակի վտանգներէն ու փորձութիւններէն: Արժանի ըրէ գոհութեամբ փառաւորելու քեզ՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

### PRIÈRE POUR TOUS

Souviens-toi de nous, tes ministres, de nos parents, enseignants, frères, amis, de ceux qui nous nourrissent, ceux qui ont faits des vœux, ceux qui voyagent, ceux qui nous donnent la paix, ceux qui travaillent, les confesseurs, les pénitents, les reclus, le malades, les opprimés, le princes, les malfaiteurs, les bienfaiteurs, les ennemis, ceux qui nous haïssent et tous ceux qui nous sont unis dans la foi afin de prier pour eux.

O Dieu infini et miséricordieux, dans ta grande sagesse et dans ton amour infini pour l'humanité, sois prompt envers tous ceux qui croient en toi et aie pitié de nous tous. Aide-nous et libère-nous des dangers et des épreuves. Rends-nous dignes de te remercier, de te glorifier et de remercier et de glorifier le Fils et le Saint-Esprit, maintenant et toujours dans l'éternité de l'éternité.



## ՇԱԲԹՈՒԱՅ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԸ

Ամենէն շատ ներողամտութիւն կը ցուցաբերէ ան, ով իրեն հանդէպ ոչ մէկ ներողամտութիւն չի պահանջեր:

Գարլ Կուսլաւ Եունկի  
Հոգեբան-Փիլիսոփայ

Մենք միշտ կը սիրենք անոնց, որոնք կը հիանան մեզմով, բայց միշտ չէ, որ կը սիրենք անոնց, որոնք կը հիացնեն մեզ:

Գարլ Կուսլաւ Եունկի

Հոգեբան-Փիլիսոփայ

Եթէ քաջութիւն չկայ, յառաջդիմութիւն ալ չկայ: Քաջութիւնը այն է, երբ վստահութեամբ ամբողջապէս Աստուծոյն կը տրուիս: Ով քաջութիւն ունի, ան սէր ալ ունի, եւ Աստուած այդ հաշուի կ'առնէ:

Ս. Պաիսիոս Աթոսացի

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒԱՆ

### Մայիս– Mai

4, Երկուշաբթի – ԻԳ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Lundi 4 – 23ème jour de la période des 50 jours  
qui vont jusqu'à la Pentecôte

5, Երեքշաբթի – ԻԴ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Mardi 5 – 24ème jour

6, Չորեքշաբթի – ԻԵ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Mercredi 6 - 25ème jour

7, Հինգշաբթի – ԻԶ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Jeudi 7 – 26ème jour

8, Ուրբաթ – ԻԷ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Vendredi 8 – 27ème jour

9, Շաբաթ - ԻԸ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Samedi 9 – 28ème jour

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 3 Մայիս 2020



Տ. եւ Տիկ. Գրիգոր եւ Սիլվիա Տեմիրճեաններու,  
Պրն. Արա Տեմիրճեանի,  
Ալեքս եւ Միրիամ Տեմիրճեաններու եւ ընտանիքներուն,  
Պրն. Յարութ Տեմիրճեանի եւ ընտանիքին,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ եղբոր, հօրեղբոր եւ հարազատին

**ՎԱՐՈՒԺ ՏԷՄԻՐՃԵԱՆԻ**

**(VAROUJ DEMIRDJIAN)**

(մահացած Լիբանան)

Հոգւոյն ի հանգիստ:



Տ. եւ Տիկ. Էտուար Ալավերտեանի եւ Անահիտ Եղիկեանի  
եւ ընտանիքին,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ մօր եւ մեծմօր

**ԱԼԻՏԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ**

**(ALLITA HARUTUNYAN)**

(մահացած Հայաստան)

Հոգւոյն ի հանգիստ:

ՅԻՇԱՏԱԿ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ

**ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ**

**DON  
À L'ÉGLISE**



**DONATION  
FOR THE CHURCH**

**Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of  
Montreal, QC**

**Donations of April 2020 have been received with great appreciation**

**CHURCH:**

**.IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:**

**THE LATE VIVIAN DEVLETIAN-IBISHIAN:**

Mr. & Mrs. Garo & Georgette Nichanian \$100.

**THE LATE HAROUTIOUN BALLIAN:**

Mr. Bedros Bakirtzian \$150.

**EASTER MERELOTZ HOKEHANKISD**

**REQUIEM SERVICES:**

**THE LATE ANTRANIK & VERONIQUE**

**DJIHANIAN:**

Mr. & Mrs. Avedis & Arsaluys Djihanian \$100.

**THE LATE KEORHADJIAN,**

**CHAHINIAN, & PILAFIAN FAMILIES:**

Mr. & Mrs. Onnik & Marie Pilafian \$200.

**THE LATE NURHAN DEMIRDOGEN:**

Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan \$40.

**YOUGHAKIN EASTER:**

Mrs. Aline Huni \$200, Mr. & Mrs. Agop & Talin Gurunlu, Mrs. Serpouhie Sumbulian, Mr. & Mrs. Harutyun & Silva Seropyan, Mrs. Arsaluys Gerger \$100, Mr. & Mrs. Agop Mr. Ara Atam, Mr. Levon Simonyan, Mr. 7 Mrs. Manuk & Sella Ortainceyan \$50, Mr. & Mrs. Mardiros & Linda Talaslian \$30, Mr. Herair Amirian, Mr. & Mrs. Robert & Mari Sanlian \$25.

## HOLIDAYS

### RED SUNDAY – MAY 3, 2020

In the Calendar of the Armenian Church, the third Sunday following the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ is known as Red Sunday.



The color “red” has been used throughout history to represent many things. One of the symbolic meanings is the blood of the martyrs who were sacrificed for Christ, His Holy Church, and their Christian faith. During the early years of Christianity, faithful followers of Jesus Christ were subjected to severe persecutions and torments. Many elected to die rather than betray their principles of life and faith, which the Incarnate God - Christ Jesus - had endowed to them and all of mankind. The psalmist writes, “Precious in the sight of the Lord is the death of the saints” (Psalms 116:15).

Today, martyrdom is far less often an occurrence in the lives of Christians, yet it does happen. However, the greater struggle is the one against sin, which we can see manifested in many ways throughout the world. The battle against wickedness and evil, which will be victorious in the end, is the current expression of the significance of Red Sunday. The Apostle Paul writes that Christ Himself endured such opposition, that we should not grow weary in our battle against wickedness. In his letter to the Hebrews, Paul says: “In your struggle against sin, you have not yet resisted to the point of shedding your blood.” (Hebrews 12:4).

We are to use the opportunity of Red Sunday to once again remind ourselves of Paul’s exhortation to remain steadfast in the Lord, and to continue our daily labors of godness and righteousness.

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճար  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

**Ս. ԵՒ ԱՆՄԱՅ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՅԱԼԳԻՍ  
LA SAINTE MESS ET L'OFFICE DE REQUIEME**

Ուղիղ հեռարձակում - Live



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Կիրակի, 3 Մայիս 2020**

**Ս. Պատարագ առաւօտեան ժամը 10:30-ին**

**Dimanche, le 3 Mai 2020 - La Sainte Messe à 10:30**

**Հոգեհանգստեան Պաշտօն կեսօրին - Office de Requieme à Midi**

Թէեւ ներկայ իրավիճակը անորոշութեամբ կը շարունակուի, սակայն մեր Եկեղեցւոյ Ս. Եւ Անմահ Պատարագը, հոգեհանգստեան պաշտօններն ու աղօթքները առցանց կերպով կը շարունակուին մատուցուիլ:

Անոնք, որոնք կը փափաքին դիմել հոգեհանգստեան պաշտօններու, աղօթքի խնդրանքներու իրենց հարազատներու ապաքինման համար, կրնան հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066 թիւին, մենք սիրով կ'ընդառաջենք Ձեր խնդրանքներուն միաժամանակ հաղորդակից դարձնելով Ձեզի Մեր սրբազան արարողութիւններուն:

Bien que la situation actuelle reste incertaine, la liturgie de la Sainte et Immortelle, les services de requiem et les prières continuent d'être offerts en ligne. Ceux qui souhaitent demander un service de requiem et des prières pour le rétablissement de leurs proches, veuillez appeler le Bureau de l'Église au (514)279-3066, nous serons heureux de répondre à vos demandes et de vous faire participer à nos rites sacrés.

**Nous acceptons également vos dons en ligne par**







ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ  
ԱՌԱԶՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ  
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GREGOIRE L'ILLUMINEUR  
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

**ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ**

Միրելի հաւատացեալներ,  
հաճոյրով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,  
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել  
Bernard փողոցին վրայ գտնուող  
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի  
կայանատեղիին (parking) մէջ,  
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.է. ժամը 3:



**PARKING**

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard stret, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

**Adress** : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2